

ՏԱՍՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դեր 10 րուր, կես տարվանը 6 րուր:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի նմանագրատան մեջ:
Վարձարարությունը պիտի լինի մի օրվա:
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):
Ցայտարարությունը ընդունվում է ամեն լիզուով:
Ցայտարարությունները համարվում են ընդունված:
Խմբագրությունը բացվում է 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Մեր պաշտոնականների դասակարգի ընտանիքները—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ընդհանուր հայ ուսուցչական ժողով Թիֆլիսում, Ներքին լուրեր—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Բաղադրական և մանկական գերմանական Արտաքին լուրեր—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ, ՆԵՐ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Իրաւունքի կոչում:

ՄԵՐ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Մեր երկրում գեռ ևս շատ քիչ կան ազատ պարագմունքներ. այդ պատճառով մեր ինտելիգենցիայի մեծ մասը պետական ծառայություն է մտնում և այդպիսով մեր պաշտոնականների դասակարգն է կազմում մեզանում հասարակութեան ինտելիգենցիան:

Եւ որովհետեւ ամեն տեղ ինտելիգենցիան հասարակութեան մնացած դասակարգերի համար ծառայում է որպէս օրինակ թէ ընտանեկան և թէ հասարակական իդէալի, այդ պատճառով և մեզանում, հայոց այն ընտանիքները, որոնք պատկանում են պաշտոնականների դասակարգին, ամեն բանի մէջ օրինակ են ցոյց տալիս մեր հասարակական մնացած դասակարգերի ընտանիքներին:

Պաշտոնեան իր ընտանիքից դուրս խօսում է պետական լեզուով, ընտելանում է այդ լեզուն այն աստիճան, որ մտնում է այդ լեզուի գործածութիւնը և իր ընտանիքի ներքին կեանքի գործածութեան մէջ: Բացի սորանից այն ծանօթները, հիւրերը, որոնք պաշտոնային ընտանիքը իր մօտ ընդունում է, նոյնպէս բոլորն էլ պատկանում են պաշտոնականների դասակարգին:

Այդպիսով ընտանիքը փոքր առ փոքր ընտելանում է պետական լեզուն և այդ

լեզուի գործածութիւնը այն աստիճան ստիճան է դառնում ընտանեկան շրջանում, որ նոր սերունդը, մանաւանդ աղջիկները սկսում են մոռանալ և վերջը արհաւիրել իրանց մայրենի լեզուն, համոզվելով որ մայրենի լեզուով ոչ մի կրթված, ինտելիգենցիային պատկանող անհատ չէ խօսում, այլ նրանով իր մտքերը արտայայտում է միայն հին սերունդը, անկիրթ մեծ մայրը, կամ պառաւ հօրաքոյրը....

Այդպիսով կրթված դասակարգը հեռանում է, խորթանում է ժողովրդից, իր մայրենի լեզուն չի մանալով անկարող է լինում ուսումնասիրել, հասկանալ ժողովրդի կեանքը, նրա պէտքերը:

Շատ անգամ հայ պաշտոնեան լինում է և կալուածատէր և ահա նա գործ ունենալով ժողովրդի, երկրագործ հայ դասակարգի հետ, չը գիտէ նրանց լեզուն, չէ կարող նրանց հասկանալ և իր կողմից հասկանալ և նրանց իր մտքերը չի սերունդի մէջ այդ ընտելանալ պետական լեզուն և իր մայրենի լեզուի մոռանալը լինում է անգիտակցական և եթէ այդպէս կարելի է ասել պարտաւորիչ: Բայց նոյն պաշտոնային դասակարգը, մանաւանդ օրիորդները, արդէն ուրիշ աչքով են սկսում նայել մայրենի լեզուի վրա: Տեսնելով որ ոչ մի կրթված մարդ չէ խօսում այդ լեզուով, նրանք սկսում են արհամարհել մայրենի լեզուն, որի հետեւեւն այն է լինում որ վերջը սկսում են արհամարհել և այն դասակարգը, ստորին, աշխատող, երկրագործ դասը, որ խօսում է այդ լեզուով: Այդպիսով մեր նոր սերունդը սկսում է արհամարհել այն դասակարգը, որ նրա համար աշխատում է և իր ձեռքերի վաստակով նրան կերակրում է:

Սովորեւք պետական լեզուն, որովհետեւ նա մեզ անհրաժեշտ է, որովհետեւ նա մեր առաջ բաց է անում ուսման, կրթութեան լայն ասպարէզ, բայց չը մոռանանք, չարհամարհենք և մեր մայրենի լեզուն, որով խօսում է ժողովուրդը, որ այն զօրեղ միջոցներից մէկն է, որ մեզ կապում է ժողովրդի հետ, հնար է տալիս մեզ ծանօթանալ ժողովրդի հետ, ուսումնասիրել նրա կեանքը, հասկանալ նրա կարիքները և նրան հասկանալ մեր մտքերը:

Թող մեր ինտելիգենցիային պատկանող կալուածատէրերի ընտանիքները չը մոռանան, որ չէ կարելի արհամարհել այն ժողովրդի լեզուն, որ նրանց անուցանում, կերակրում է իր ձեռքի ծանր աշխատանքով: Եւ բացի սորանից չէ կարելի ժողովրդի մէջ ապրելով, առանձնացած, խորթացած, կղզիացած լինել ժողովրդի մեծամասնութեան, չէ կարելի նրա մէջ ապրելով, նրա համար օտար լինել, չէ կարելի ուզենալ նրան օգտակէտ լինել առանց հասկանալ նրա խօսած մայրենի լեզուն:

Խուս մամուլը այդ կողմից շատ ուղիղ է նկատում վերջին ժամանակները, որ բերօք կրտսեան պաշտոնականների դասակարգը խորթացել է ամեն տեղ ինտելիգենցիան ամբողջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԹԻՖԼԻՍՈՒՄ

«Մշակ» 141 №-ի մէջ ապագայ ուսուցչական ժողովի վերաբերութեամբ մենք յայտ-

նեցինք արդէն, որ ամառը մի յանձնաժողով, ապագայ ուսուցչական ժողովի պալատանց ծրագիրը քննելուց և էապէս ընդունելուց յետոյ, ի միջի այլոց որոշեց՝ ներկայ ուսումնական տարվայ ընթացքում պ. Բարխուդարեանցի միջնորդութեամբ Թիֆլիսում ընտրել մի կարգադրող մասնագիտով՝ ապագայ ժողովի բոլոր հարկաւոր նախապատրաստութիւնները տեսնելու համար: Այդ մտքով պ. Բարխուդարեանցը մի հրաւեր կարգաց Թիֆլիսի ուսումնական յանձնաժողովի անդամներին (ընտրած անցեալ տարվանից Թով 30 հոգի), չորեքշաբթի, սեպտեմբերի 30-ին, հաւաքվելու ս. Գայեանեան դպրոց: Այդ երեկոյ ներկայ էին հազիւ 9 հոգի և ժողովը չը կայացած համարվեց: Այդ ժողովում առաջարկվեց՝ հրաւիրել հետեւեալ նիստին, բացի յանձնաժողովի անդամներից, և այնպիսի անձինք, որոնք կարգադրող մասնագիտովի կառավարչական մասում աւելի պիտանի և օգտակէտ կարող են լինել: Համաձայն այս առաջարկութեան ցուցակագրվեցան որոշեալ մարդիք և ժողովը նշանակվեց չաբաթ, հոկտեմբերի 3-ին, երեկոյան 7 ժամին ս. Գայեանեան դպրոցում: Այդ ժողովին ներկայ էին մինչև 22 հոգի:

Չանագան խօսակցութիւններից յետոյ և ամառվայ վերջին յանձնաժողովի արձանագրութիւնը կարդալուց յետոյ (որը, նկատեմք այստեղ, գլխի 'ի զլուսն անկարգ և անձուռնի էր կազմած) պ. Բարխուդարեանցը յայտնեց, որ համաձայն այս վճռի այժմ պէտք է ընտրել մի կարգադրող մասնագիտով, որի համար իւրաքանչիւր անձին տուեցին մի կտոր թուղթ՝ նշանակելու 16 մարդ, որոնցից 12-ը անդամներ և 4-ը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԱՒՈՒՆՔԻ ԿՈՒՒՆ

Այս վերնագրով դուրս եկաւ դօկտոր Բուրճի Նիքիթի 1872 թ. տպված այն ճառը, որ նա կարդաց Վիեննայի իրաւագէտների ընկերութեան մէջ:

Այն ազդու, զօրեղ և մի և նոյն ժամանակ հասարակ և պարզ լեզուն, որ նշանաւոր գերմանացի իրաւաբանը բացատրում է թէ ինչպէս է ամենայն մի իրաւունք գոյանում և իր գոյութիւնը պահպանում, մեծ տպաւորութիւն գործեց ամբողջ Եւրոպայի հասարակութեան վրա, վասն որոյ ևս աւելորդ չը համարեցի նրա գրքոյի գլխաւոր միտքը յայտնի անել փոքրիկ յօդուածով կարգադրող հայ հասարակութեան:

Իրաւունք բանը բովանդակում է իր մէջ մի յայտնի նպատակ և կրկնակի միտք ունի, առաջին՝ հէնց այդ նպատակն է, որին պէտք է հասնել, երկրորդ՝ այն միջոցն է, որ կարելի է հասնել նպատակին. բաւական չէ գիտենալ այս վերջինը, այլ հարկաւոր է որոնել և միջոց նրան ձեռք բերելու: Այս պատճառով իրաւունքը պէտք է պատասխանի այս երկու հարցին, և ճշմարիտ ամենայն մի իրաւունքի բացատրութիւն, լինի նա սեփականութեան իրաւունք, ժառանգութեան իրաւունք, քաղաքացիական իրաւունք և այլն, բովանդակում է երկու մաս, առաջին՝ որ ցոյց է տալիս այդ հաստատութեան (ИНСТИТУТ)

նպատակը, երկրորդ՝ նրա ձեռք բերելու միջոցները:

Երբ որ մենք երեակայացնում ենք մի որ և իցէ իրաւունք, իսկոյն մեր մտքում ներկայանում են երկու իրար հակառակ գաղափարներ՝ խաղաղութիւն և կռիւ, խաղաղութիւնը ինչպէս նպատակ, կռիւը ինչպէս միջոց այդ իրաւունքը գործ դնելու, և այդ երկու գաղափարները միմեանց լրացնելով սերտ կերպով կապված են իրար հետ: Բայց թէ իրաւունքը խաղաղութիւն է, կասեն շատերը, որ պէտք է կռիւ հետ ոչինչ կապ չունենայ և որտեղ կայ իրաւունք, այնտեղ կռիւ տեղ չը կայ: Այդ այդպէս կը լինէր (ասում է Նիքիթը) եթէ որ խօսքս լինէր անիրաւունքի իրաւունքի հետ կռիւում վրա, բայց ոչ, խօսքս իրաւունքի անիրաւունքի հետ կռիւում վրա է, առանց կռիւի որ իրաւունքը պէտք է վարել անիրաւունքի հետ նա կորած է, ոչինչ է, քանի որ իրաւունքը կը շարունակի ենթարկվել անիրաւունքի յարձակմունքներին, իսկ այս պէտք է շարունակվի յաւիտեան, իրաւունքի կողմից մրցումը անհրաժեշտ է և անվարձան: Ուրեմն պէտք է ասած, որ կռիւն ոչ թէ մի կողմնակի բան է իրաւունքի համար, այլ թէ կապված է այս վերջինի հետ սերտ կերպով և նրա գոյութեան անհրաժեշտ պայմաններից մէկն է: Վասնորոյ ամենայն մի իրաւունք աշխարհում պէտք է կռուվ ձեռք բերվի, լինի նա ամբողջ ժողովրդի կամ անհատի (այստեղ կռիւ բառը պէտք է հասկանալ ընդարձակ մտքով, ինչպէս խաղաղ միջոցներ նոյնպէս և արիւնահեղ պատերազմ): Այս պատճառով է որ արգարութիւնը նկարում են բռնած մի ձեռքում կշիռ, որով

կշռում է իրաւունքը, իսկ միւս ձեռքում սուր առաջնի պաշտպանութեան համար:

Իրաւունքը արդիւնք է ոչ թէ միայն պետական վարչութեան անդադար աշխատանքի, այլ և ամբողջ ժողովրդի. եթէ մենք մի հայացք ձեռք մի որ և իցէ ազգի իրաւաբանական շարժման վրա, միզ կը պատկերանայ մի և նոյն անվաստակ աշխատութիւնը այս ասպարիզում, ինչ որ մենք տեսնում ենք նրա անտեսական և մասուրական կեանքում:

Եւ ամենայն մի անհատ, որ զգում է իր իրաւունքը պաշտպանելու անհրաժեշտութիւնը, մասնակցում է այս համագային անվախճան աշխատութեան: Ի հարկէ կան մարդիկ, որոնց համար կռիւը պահանջ չէ. հազարաւոր անհատների կեանքը անցնում է արմատ գցած իրաւունքի սովորութեան յայտնի գծով և եթէ մենք նրանց ասենք թէ իրաւունքը կռիւ է, նրանք չէին հասկանայ, ինչպէս բարեկեցութիւն վայելող հարուստ ժառանգը կը զարմանայ, եթէ նրան ասես թէ սեփականութիւնը աշխատութեան արդիւնք է: Այս կարող է վերաբերել ոչ թէ միայն անհատներին, այլ և ամբողջ սերունդի. մէկին վիճակվում է անընդհատ պատերազմ, իսկ ապագայ սերունդը վայելում է խաղաղ կեանք: Ազգերը մի և նոյն սխալ գաղաղութիւնն են անում, ինչ որ առանձին մարդիք: Այնու ամենայնիւ իրաւունքը պահպանում է միշտ իր երկու յատկանիւնը—խաղաղութիւն և կռիւ: Մէկի փոխարէն որ վայելում է հանդիստ կեանք, միւսը աշխատում է և կռուում:

Այս գաղափարը, որ ես յառաջ եմ բերում, ասում է Նիքիթը, հակառակ է նախկին չիցլայի

հայացքին իրաւունքի ծագման և պահպանութեան մասին: Այս բովանդակական չիցլայի, որի պարագլուխ կարելի է անուանել Սալվինի և Պուխտայ, ուսումը, որ մինչև այժմ էլ տարաբախտաբար տիրում է հասարակական կարծիքին, քարոզում է, որ իրաւունքը բղիւսում է ինքն իրան խաղաղ և աննկատելի կերպով, առանց կռիւի և աշխատութեան ազգի կողմից, այնպէս, ինչպէս ծագում է և կազմվում լեզուն իր բառերով և կանօններով, և էլ այս կարծիքի տէր էի, ասում է Նիքիթը, երբ դուրս եկայ համալսարանից, բայց կարելի է արդեօք նրան հիմնաւոր համարել: Պէտք է ասած, որ ճշմարիտ, իրաւունքը մի կողմից ունի այդ յատկութիւնը—խաղաղ կերպով զարգանալ. այս դէպքին կարելի է վերաբերել զանազան օրինական գրութիւններ, որոնք դուրս են բղիւսած այս և այն օրինական կանօններից և դարձած ժողովրդի սովորութիւն, նոյնպէս այն փոխառութիւնները, կանօնները, որք գիտութիւնը առնում է նախկին օրէնսդրութեանց և դիւրեկտիւայի միջոցով ստեղծում է ամբողջ գաղափար և տալիս հասարակաց գիտակցութեան: Բայց այս երկու ֆակտորների (գործիչների) այսինքն սովորութիւն և առիթն ու թիւն են անհրաժեշտ գործութիւնը շատ սահմանափակված է իրաւունքը ստեղծելու: Նա միայն կարող է կանօնաւորել օրէնսդրութեան ընթացքը, երբ սա արդէն գոյութիւն է ստացել և օգնել սրան ընթանալ յայտնի ճանապարհով. բայց սովորութիւնը և գիտութիւնը (իրաւաբանութիւնը) իրաւունքը գոյանալու պատճառ չեն կարող լինել, չեն կարող ոչնչացնել այն խոշորութիւնը, որոնք արդեւք են նոր հասանքին:

պաշտպանը արդէն խնդրել է դադարեցնել դատաստանական քննութիւնը մինչև հրապարակման վրայն հասնելու:

ԳԵՐՄԱՆԻԱ

Չը նայելով, որ կոմս Հալսթեյդը չէ կամենում թողնել դեսպանի պաշտօնը Կ. Պոլսում, այնուամենայնիւ Բերլինի մէջ նրա համար պատրաստում են արտաքին գործերի մինիստրի պաշտօնը: Հաւանական է, որ գերմանական դեսպան Կ. Պոլսի մէջ կը նշանակվի Բադենցի:

Բայիստագի գումարումը նշանակված է նոյեմբերի 15-ին: Բայիստագին ներկայացնելու առաջարկութիւնները կը քննվեն նաև խաղաղարարական ժողովի մէջ և նախագիծերի բովանդակութիւնը կախված կը լինի նրանից, թէ Բայիստագը ինչպիսի կազմակերպութիւն կունենայ: Եթէ Բայիստագի մէջ իշխան Բիսմարկի կողմնակիցները մեծամասնութիւն կը կազմվի, նա կը շարունակէ իր գոյութիւնը, հակառակ դէպքում ծննդեան տօնից յետոյ Բայիստագը կարճակիւ և նոր ընտրութիւններ կը նշանակվեն: Եթէ մինչև անգամ իշխան Բիսմարկին ձեռնադրու մեծամասնութիւն կազմվի, այնուամենայնիւ առաջին շրջանին կառավարութիւնը չի ներկայացնի ծխախոտի արտօնութեան և բանւորների ապահովելու օրինագիծները:

Պաշտօնական լրագիրները պաշտպանում են կառավարութեանը այն մեղադրանքի դէմ, իբր թէ նրա անզգոյշ վարմանը առիթ է տուել վատիկանի և գերմանական կառավարութեան մէջ կատարվող բանակցութիւնների սառնութեանը: Լրագիրները պնդում են, որ երկու կառավարութիւնները մէջ խաղաղ բանակցութիւնները շարունակում են և կարող են ցանկալի հետևանքներ ունենալ:

Պրուսական պարլամենտի նախկին պատգամաւոր Ֆօն-Ունդու, որ հրատարակեց իր յիշողութիւնները իշխան Բիսմարկի գործունէութեան մասին 1848 թուականից, յայտնում է լրագիրների մէջ, որ նա մտադիր է դատաստանի ենթարկել իշխանի օր-

դան „Nord Deut. Alg. Zt.“ լրագիրը վիրտուալաբար համար Զիշել լրագիրը անազնութիւն է անուանում իշխան Բիսմարկի մասնաւոր խօսակցութիւնների հրատարակութիւնը, որոնցով իշխանը անհամար կրեւի անձնաւորութիւն է նկարագրվում: Բիսմարկի լրագիրը իր սովորութեան համեմատ խստութեամբ յարձակեցաւ Ֆօն-Ունդուի դէմ և այժմ նա կենթարկվի դատաստանական պատասխանատւութեանը:

ԱՐՄԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Times» լրագրի Բերլինի թղթակիցը հաստատում է, որ իշխան Բիսմարկ իր մասնաւոր խօսակցութեան ժամանակ Բերլինի կոնգրեսի անդամների հետ, չէր ծածկում, որ Բալկանեան թերակղզու ապագան պատկանում է Ռուսաստանին և Աւստրիային և որ Անգլիան ոչինչ չաւելի արգելել այդ պետութիւններին հասնելու իրանց նպատակին, միայն թէ թողնէին իրանց Եգիպտոսը:

—Աւստրիական լրագիրները խօսքերով Բուխարէստում, Նասայում, Գալացում և րումինական այլ քաղաքներում կազմվեցան հրէական մասնաժողովներ օգնելու հրէաների գաղթականութեանը Պալէստինում: Մի և նոյն նպատակով բազմած են փոքր ժողովարարութիւններ, որոնք շատ յաջող են գնում: Կենտրոնական մասնաժողովը դիմեց Թուրքիայի ներկայացուցչին Բուխարէստում հրէական ազգայնականութեան համար հողեր ձեռք բերելու նպատակով: Բոլոր գաղթիկ ցանկացողները դիտարկութիւն ունեն երկրագործութեամբ պարագել:

—«Порядокъ» լրագիրը հաղորդում է, որ Մէկկայում խօսքեր յայտնվելու պատճառով Կ. Պոլսի առողջապահական յանձնաժողովը, Բ. Վերան համաձայնութեամբ, հրամայեց, որ մահմետական սուրբ տեղերը ուխտաւորներ տանող նաւերը չը մտնեն Ան Ժովի նաւահանգիստները: Այդ պատճառով, Ոսկիջուրին մօտեցած ռուսաց չոգենաւր, իր ճանապարհը շարունակելուց առաջ, ստիպված էր նաւի վրա եղող ուխտաւորներին ափը իջնցնել: Նրանք մի ուրիշ չոգենաւրով յետ կուղարկվին Ռուսաստան:

—«Times» լրագրում տպված է այն թղթակցի երկրորդ նամակը, որը այնքան մեծ աղուկ հանեց Թուրքիան բաժանելու իր նախագծով: Նա հաստատում է իր խօսքերը, ասելով, թէ իր տեղեկութիւնները պաշտօնական աղբւրից է ստացել: Նրա կարծիքով, Բալկանեան թերակղզու վրա փոքրիկ ինքնավարութիւն ունեցող պետութիւններ կազմակերպելու գաղափարը բոլորովին

խիմքա է, աչքի առաջ ունենալով արեւելեան ցեղերի անդադրադադրութիւնը և միմեանց դէմ ունեցած թշնամութիւնը: Այդպիսի ինքնավարութիւնը միայն անդադար պատերազմների պատճառ կը դառնար: Արեւելեան փոքրիկ պետութիւնները չեն կարող զարգանալ, սուանց կենտրոնական իշխանութեան օրհրդակցող ազդեցութեանը, որը միայն Աւստրիան կարող է լինել: Բայց յիմարութիւն կը լինէր մտածել, որ Աւստրիան յանձն կառնի այդ խնդրը անշահախորժութեամբ:

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ նախագահ Գրէվի իր եզրօր՝ Ալժիրայի գեներալ-նահանգապետի հետ, փարիզ վերադարձաւ: Ժիւլ Ֆերրիի նախագահութեամբ կայացած մի-նիստրների խորհրդում, կարենէտի անդամները վճռեցին, հանրապետութեան նախագահի ցանկութեան համաձայն, հոկտեմբերի 17-ին հրաժարական տալ: Խնդիրքը կընդունվի և կը հրատարակվի միայն այն պայմանով, որ նրանք կը պահպանեն իրանց պարտքէլները մինչև նոր կարենէտի կազմվելը: Ամենքը հաւատացած են, որ նախագահը Գամբետային կառավարի այդ գործը, բայց որ նա բանակցութիւններ կը քաջալի մինչև պատգամաւորների նոր ժողովի բացվելը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկական լրագիրները գրում են այն ահագին օգուտի մասին, որ տալիս է էլէկտրականութիւնը: Երեսուն և ութ տարի առաջ, փոթորկից վնասված Վէրմիլիօն նաւը խորացուցվեցաւ Երա լճի ջրերում: Այդ նաւի վրա դարձաւ էր տակառներով պղինձ, որի արժողութիւնն էր վաթսուն հազար դոլար: Շատ անգամ յայտնվում էին բազմաթիւ մարդիկ, որոնք աշխատում էին գտնել այդ կորած հարստութիւնը, բայց ոչ ոք չէր կարողանում որոշել տեղը, թէ ինչ տեղ նաւը ջրի տակ գնաց: Այդ բանը գտաւ էլէկտրականութիւնը: Մէկ փոքրիկ նաւ պատրաստեցին, որի վրա դրին նոր հնարած էլէկտրական մեքենան, որ հեռու տարածութեան վրա ցոյց է տալի մետաղների ներկայութիւնը: Ընթացիկ շատ խոր տեղում էլէկտրական մեքենան ցոյց տուեց մետաղի ներկայութիւնը: Յաճախ թողնելով ջրի տակ, և երեսուն ու ութ տարի ծովի խորքում թաղված հարստութիւնը ժամանակակից հնարագիտութեան աւար դարձաւ:

—Մայից քաղաքը մինչև 1866 թիւը, այսինքն մինչև այն ժամանակը, երբ նա գերմանական կայսրութեան քաղաք դարձաւ, ունէր չափից դուրս զանազանակերպ հիմնարկութիւններ և կատարելապէս կոսմոպոլիտական քաղաք կարող

էր համարվել: Հետեւեալ երկրագործներ, ֆրանսիական օրէնքներ, գերմանական ազգայնականութիւն, հռոմ-կաթոլիկական եկեղեցի, պրուսական կոմենդանտ, աւստրիական նահանգապետ, տուրնական փոստ, բաւարական հեռագիր և Բադենի գաղափար ընկերութիւն, եւ ճշմարիտ, որ քաղաքը աշխարհիս երեսին կարող է ցոյց տալ իր մէջ այդքան զանազանակերպ հիմնարկութիւններ:

—Կապրէտոյից գրում են մի քանի մանրամասնութիւններ Գարիբալդիի մասին: Երեսուն իրան շատ լաւ է զգում, շատ զբօսում է իր կնոջ և երեխաների հետ, կարգում է, գրում է, սիրով խօսում է իրան այցելողների հետ, բայց բոլոր նրա հոգսերը, զխաւորապէս, կենտրոնացած են իր որդու կրթութեան վրա, որը, ինչպէս ասում են, շատ նման է նրան:

—Գէնուէզեան լրագիրները յայտնում են, որ Մադրիդ քաղաքում գաղթականութիւնների վարչութեան շինութեան պահեստներում գտնվեցաւ ֆրիստօֆոր Կոլումբոսի պատկերը, որը դեռ մեծ ծովագնացի կենդանութեան ժամանակ իւղաներկով է նկարված: Այդ պատկերը շատ գեղեցիկ պահպանվել է և նրա վրա հետեւալ գրութիւնն է գտնվում: «Columbus Ligur novi orbis repertor» (Կոլումբոս Լիգուրից, որը գտնել է նոր Աշխարհը): Պատկերը ներկայացնում է քառասուն տարեկան մէկ առողջ տղամարդ, սև, խիտ մազերով, կենդանի փայլուն աչքերով և արծաթեան քթով: Պատկերից հանած առաջին կօպիան ընծայվեցաւ դուքս Վէրագոլին, որը ֆրիստօֆոր Կոլումբոսի այժմեան սերունդներից մէկն է:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԴ, 5 հոկտեմբերի: «Новое Время» լրագիրը հաղորդում է. հոգեւոր յետ գնելու վճարքների էկսպրեսների խորհուրդը որ քննում էր յետ գնելու ապառիկների հարցը, կարծիք յայտնեց, որ ապառիկները հաւաքվել են զիւղացիների աղքատութեան պատճառով: Ապառիկների ներքը ամեն տեղ անհրաժեշտ է: Եկապրաների կարծիքով, դա կայսերական ուղղութեան գործ կը լինէր: Կայացավ առաջարկեց ապառիկները հանել հաշիւներէ: «С.-Петербург. Вѣдом.» լրագիրը հաղորդում է լուր, իբր թէ թատրոնները մեծ պատին փակված կը լինեն: Լուր կայ, որ երկաթուղիների ընկերութիւնները նոր արտօնութիւններ են ստանում տարիքի վերաբերութեամբ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՆԵՆԻ

լինել ընդդիմադրելու և պատժելու, իսկ այն արարմունքը, որ անգիտութեան կամ սխալմունքի արդիւնք է, նա հասկանալի է, որ չէ կարող պարտաւորել իր մէջ անիրաւութիւն և հետեւապէս կրել օրէնքի կողմից պատժի:

Ինչպէս որ ժողովուրդը կռիւ է բաց անում ոչ թէ մի կտոր հողի պատճառով, այլ թէ իր սեփական իրաւունքը պաշտպանելու և ոտնակոխ եղած պատիւը և անկախութիւնը կանգնեցնելու, այնպէս էլ գիւղացին պէտք է պինդ և հաստատուն կերպով պաշտպանէ ոչ թէ միայն կորած կամ ոչնչացրած սեփականութեան իրաւունքը, որ (այսինքն կորած բարիքը) շատ անգամ կարող է լինել աննշան, այլ նոյնպէս ապահովացնել և պաշտպանել անձնական պատիւը և յաջեցնել իրաւական զգացմունքը: Պարզ է, որ վեճը հիմնված լինելով կայքի վրա շատ անգամ փոխում է իր բնասորութիւնը և ստանում է բարոյական կերպարանը:

Ի հարկէ, ինչպէս փորձը ցոյց է տալիս, շատերը կան, որ այսպիսի դէպքերում հակառակ ընթացք են բռնում, որոնց համար հանգստութիւնը աւելի թանկ արժէ, քան թէ իրաւունք վայելելը: Ինչպէս պէտք է վերաբերվենք սրան, կարելի ասել թէ այս քեփից և բնութիւնից է կախված, մէկը սիրում է կռիւ, ընդդիմադրել, միւսը հանդիստ ապրել: Ի հարկէ իրաւական կէտից նայած երկուսն էլ հասնութեան արժանի են, որովհետեւ ամեն մարդ իրաւունք ունի իր իրաւունքը պաշտպանել և չը պաշտպանել, բայց ես, ասում է Երնցը, համարում եմ այս հայացքը վերին աստիճանի ծուռ, անբարոյական և հակառակ իրաւունքի էութեան: Եթէ յիշեալ

հայացքը տարածվի և գործադրվի ամեն ուրեք, այն ժամանակ մեղ կը ներկայանալ իրաւունքի այն տիպը վիճակը, որտեղ նա իր հաստատութեան համար ի տեղի բարոյաւոր քաջութեամբ կուեն անիրաւութեան դէմ, կը սովորեցնէր մեղ երկչոտութիւն: Իսկ իմ համոզմունքս այսպէս է —անիրաւութեան դէմ դնել իւրաքանչիւրիս պարտականութիւնն է (ա) յանուն իր սեփական անձի, որովհետեւ այդ ինքնապահպանութեան հիմն է, (բ) յանուն հասարակութեան օգտին, որովհետեւ նրան հետեւելու համար հարկաւոր է որ այս համոզմունքը դառնար ընդհանուր:

Այն աստիճանը, որով իրաւական զգացումը գրգռում է ընդդիմադրել անիրաւութեան դէմ, կարող է ծառայել, իմ (հեղինակի) կարծիքով, ուղիղ մաշտամբ (չափա) թէ ինչպէս է հասկանում այս կամ այն ազգը կամ անհատը իրաւունքի նշանակութիւնը:

Ես այս համարում եմ անհրաժեշտ ճշմարտութիւն, որ կարող է վերաբերել թէ հասարակական իրաւունքի (общественное право), թէ անհատական (частное право):

Մի և նոյն է թող ինչ ուզում է լինի իրաւունքի առարկան: Եթէ այս առարկան ձեռք եմ բերել սեփական աշխատութեամբ կամ ժառանգելով ուրիշից, նա իմն է, ես նրան տէրութիւն եմ անում և պահելով նրան պահում եմ և պաշտպանում եմ նրանում իմ կամ ուրիշի աշխատութեան արդիւնքը: Տիրելով այդ առարկային, ասում է գերմանացի իրաւաբանը, ես նրան գրաւում եմ իմ անձնաւորութեամբ, ով նրան կպչում է՝ ինձ է կպչում, այն հարուածը որ նրան են ուղղում՝ ինձ է դիպչում, որովհետեւ

նրա մէջ ներկայ է իմ անձնաւորութիւնը: Այս սերտ կապը իրաւունքի և անձնաւորութեան մէջ յատկացնում է բոլոր իրաւունքներին անշափի պիւն, որը ես ի հանդիպութիւն նրա նիւթական գրեւթին, անուանում եմ իղէալական արժէք: Այս իղէալական արժէքի շնորհիւ է, որ գիւղացին իրանից խլած մի քանի խորձ խոտի կամ ցորենի համար դատ է բացանում անիրաւին պատժելու համար, թէկուզ առաջուց գիտենար, որ մեծ դալմադրի մէջ կընկնի և գուցէ նպատակին էլ չի հասնի: Այդ իղէալական արժէքն է, որ ներշնչում է մարդու մէջ արիւթիւն իր ոտնակոխ եղած իրաւունքը պաշտպանել, ինչ զատակարգի նա պատկանում լինի, կրթված թէ տղետ և, ինչպէս ասացի, այն աստիճանը, որով իրաւական զգացումը գրգռում է ընդդիմադրել անիրաւութեան դէմ, փորձաքար կարող է լինել թէ որքան զարգացած է իրաւաճանաչութիւնը: Բայց զգալ մէկից անիրաւութիւն և չը հետամոտել ոտնակոխ եղած իրաւունքը պաշտպանել, չը պահանջել վտանգը, կամ համբերութեամբ տանել հարուածը, կը նշանակէ հրաժարվել իրաւունքից, որ գուցէ ներքի է մասնաւոր դէպքերում հանգամանքների պատճառով, բայց կուենայ կորստաբեր հետեանք, եթէ այդ շարունակվի երկար, զգացողութիւնը բոլորովին կը բթանայ, մինչև որ հազիւ ցաւ կը զգայ:

Եթէ գիւղացին թողնէ անպատիւ ոչխարը խըւղ աւաղակին, թող հաստատ գիտենայ, որ միւս օրը կովն էլ կը տանի, մի քիչ էլ որ սպասէ, արտերի ցանքն էլ կը տանի, մի քիչ էլ որ սպասէ, աղջիկն էլ կը փակցնէ և վերջապէս ամբողջ գիւղը իր բնակիչների երկչոտութեան շնորհիւ

բոլորովին կը թախմի և կը փչանայ չարածճի խմբից:

Որտեղ կայ անաշու դատաւոր, պէտք է դիմել նրան իրաւունքի պաշտպանութեան համար, իսկ եթէ չը կայ, եթէ տէրութիւնը իր ժողովրդին չէ պաշտպանում, ինչպէս այդ պատահում է Տաճկաստանում և ուրիշ վայրերի երկրներում, այնտեղ մարդ աւաղակին դէմ դնելու համար պարտաւոր է ինքն իրան պաշտպանել:

Ինքնապաշտպանութիւնը մարդու ամենատրամազան իրաւունքն է, որ ստուած է ինքը բնութիւնը: Եւրօպական բոլոր կողէկաները, ինչպէս յայտնի է, թույլ են տալիս մարդու վտանգի ժամանակ, եթէ օրինական միջոց անյապաղ չէ կարելի գործադրել, դիմել սեփական զօրութեան (право необходимой обороны):

Ահա ինչ է ասում գերմանացի փիլիսոփայ Կանտը այդ հարցի մասին: «Տէրութիւնը կազմվելու ժամանակ ամեն մի անհատ հրաժարվում է իրան պաշտպանելու իրաւունքից այն պայմանով, որ տէրութիւնը ինքը հարկաւոր ժամանակ նրան պահպանէ, բայց երբ այս վերջինը չէ ուզում կամ չէ կարող իր պարտքը կատարել, այն ժամանակ մարդ կրկին իր ձեռքն է բերում ինքնապաշտպանութեան իրաւունքը»:

«Իրաւունքը, ասում է Բեռնէր (Հեգելի հետևող), չը պէտք է խոնարհվի անիրաւութեան առաջ, երբ այս վերջինը ոտնակոխ է անում արդարութիւնը, թող իրաւունքը հզօր կերպով ընդդիմադրէ»:

Խօսված Բաղդասար Կարգոսեանց